ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, (060) 650162, (060) 650040 vanadzor.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 սեպտեմբերի 2026 թվականի N 1615

ԳԵՎՈՐԳ ՀՐԱՉԻԿԻ ՀԱԿՈԲՅԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՈՂՈՔԸ ԱՄԲՈՂՋՈՒԹՅԱՄԲ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**1. ՀՀ Վանաձոր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.**

ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմում քննարկվել է Գևորգ Հրաչիկի Հակոբյանի լիազորված անձ՝ Արթուր Սուքիասյանի 07.08.2026 թվականի թիվ հ.2161688 վարչական բողոքը՝ ՀՀ Վանաձոր համայնքի ղեկավարի 2026 թվականի հունիսի 10-ի «Գևորգ Հրաչիկի Հակոբյանին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին» թիվ 1136 որոշման դեմ:

**2. Վարչական ակտ ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.**

Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի կողմից կազմված արձանագրության և զեկուցագրի համաձայն՝ Վանաձոր, Տիգրան Մեծի 36-1 հասցեում /կադաստրային ծածկագիր: 06-001-0435-0022, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 0707-2020-06-0026 վկայական/, 0,0037 հա մակերեսով հողամասում, ինքնակամ կատարվել են հասարակական նշանակության շինության ընդլայնում, և առանց շինարարության թույլտվության՝ շինարարական աշխատանքներ: Նշված ինքնակամ աշխատանքներն իրականացվել են Գևորգ Հրաչիկ Հակոբյանի կողմից. վերջինիս կողմից ընդլայնված հատվածը գտնվում է Վանաձորի պետական համալսարանին պատկանող տարածքում:

10 հունիսի 2026 թվականին Վանաձոր համայնքի ղեկավարի կողմից ընդունվել է «Գևորգ Հրաչիկի Հակոբյանին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին» թիվ 1136 որոշումը:

06 օգոստոսի 2026 թվականին Գևորգ Հրաչիկի Հակոբյանի լիազորված անձ՝ Արթուր Սուքիասյանը, չխախտելով Վանաձոր համայնքի ղեկավարին վարչական կարգով բողոքարկելու ժամկետները, բողոքարկել է Վանաձոր համայնքի ղեկավարի 2026 թվականի հունիսի 10-ի «Գևորգ Հրաչիկի Հակոբյանին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին» թիվ 1136 որոշումը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետի համաձայն վարչական բողոքը կարող է բերվել վարչական ակտն ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում:

1. 07 օգոստոսի 2026 թվականի թիվ h.2161688 վարչական բողոքում նշվել է, որ Վանաձոր համայնքի ղեկավարի 10 օգոստոսի 2026 թվականին Վանաձոր համայնքի ղեկավարի կողմից ընդունվել է «Գևորգ Հրաչիկի Հակոբյանին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին» թիվ 1136 որոշումը, որը պետք է ճանաչվի անվավեր, քանի որ, ըստ բողոքաբերի՝ այն կայացվել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածի խախտմամբ:

Վերոգրյալի մասով վարչական մարմինը նույն վարույթի շրջանակներում, կարևորելով վարչական վարույթի մասնակցի լսված լինելու իրավունքը, կիրառելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածով սահմանված պահանջները, 10 օգոստոսի 2026 թվականին հրավիրել է վարչական վարույթի լսումներ (որը պետք է տեղի ունենար 14 օգոստոսի 2026 թվականին), սակայն վարչական վարույթի մասնակցի կողմից լիազորված Ա. Սուքիասյանը 13 օգոստոսի 2026 թվականի դիմումով տեղեկացրել է, որ աշխատանքային ծանրաբեռնվածությամբ պայմանավորված չի կարող մասնակցել նշանակված վարչական վարույթի լսումներին, սակայն պարզաբանումների անհրաժեշտության դեպքում, խնդրել է լսումները հետաձգել և նշանակել այլ օր:

Վարչական մարմինը՝ հաշվի առնելով բողոքաբերի կողմից պարզաբանումների ներկայացման կարևորությունը, 19 օգոստոսի 2026 թվականին կրկին հրավիրել է վարչական վարույթի լսումներ 25 օգոստոսի 2026 թվականին և դրա ուղեկցական գրությամբ հայտնել է, որ վարչական մարմինը, հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասը, այն է՝ վարչական մարմինը վարչական վարույթի ընթացքում պարտավոր է վարույթի մասնակիցներին և նրանց ներկայացուցիչներին հնարավորություն տալ արտահայտվելու վարչական վարույթում քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ, կարևորելով սույն վարույթի շրջանակներում բողոքաբերի ներկայությունը, ինչպես նաև իրավախախտման առկայությունը բացառող փաստական հանգամանքների և փաստաթղթերի առկայության դեպքում, վերջինիս կողմից դրանք վարչական մարմնին տրամադրելու հնարավորությունը, պահպանելով նաև նրա լսման իրավունքը, կրկին հրավիրել է վարչական վարույթի լսումներ, որի վերաբերյալ կից ներկայացվել է համապատասխան ծանուցագիր:

Վարչական մարմինը, ապահովելու համար վարչական վարույթի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը, բացահայտելու համար գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները, անհրաժեշտ է համարել վարչական վարույթի բոլոր կողմերի ներկայությունը վարչական վարույթի լսումներին, բարենպաստ վարչական ակտի կայացման հնարավոր բոլոր պայմանները ապահովելու և գործում առկա որևէ էական հանգամանք բաց չթողնելու նպատակով:

19 օգոստոսի 2026 թվականի թիվ h.2184448 դիմումով վարչական վարույթի մասնակցի կողմից լիազորված Ա. Սուքիասյանը հայտնել է, որ 25 օգոստոսի 2026 թվականի վարչական վարույթի լսումներին ներկա չի կարող գտնվել, քանի որ այդ օրը Հայաստանի Հանրապետությունում չի լինելու:

Վարչական մարմինը 20 օգոստոսի 2026 թվականին կրկին հրավիրել է վարչական վարույթի լսումներ 31 օգոստոսի 2026 թվականին, համաձայնեցնելով օրը և ժամը վարչական վարույթի մասնակցի կողմից լիազորված Ա. Սուքիասյանի հետ, քանի որ, վարչական մարմինը ցանկացել է լիարժեք ապահովել վարչական վարույթի մասնակցի ներգրավվածությունը, որով հնարավորություն կստեղծվեր վերջինիս համար ներկայացնել վարչական իրավախախտումը բացառող բոլոր հանգամանքները:

Արդյունքում՝ վարչական վարույթի մասնակցի կողմից լիազորված Ա. Սուքիասյանը մասնակցել է 31 օգոստոսի 2026 թվականին հրավիրված վարչական վարույթի լսումներին և հայտնել է, որ պնդում է վարչական բողոքում նշված փաստարկները:

Այսպիսով, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ վարչական բողոքը քննարկվել է վարչական մարմնի կողմից հարուցված միևնույն վարչական վարույթի շրջանակներում՝ ապահովվել են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածով սահմանված պահանջները, ավելին, վարչական վարույթի մասնակցին բազմիցս հնարավորություն է տրվել ներկայացնել վարչական իրավախախտումը բացառող ապացույցներ, որոնք վարչական մարմնին հնարավորություն կտային վերանայել բողոքարկվող վարչական ակտը և ընդունել բարենպաստ վարչական ակտ, սակայն նման ապացույց չի ներկայացվել և չի հերքվել իրավախախտման փաստը:

2. Ինչ վերաբերում է բողոքաբերի մյուս պնդմանը, այն է՝ 10 հունիսի 2026 թվականին Վանաձոր համայնքի ղեկավարի կողմից ընդունված «Գևորգ Հրաչիկի Հակոբյանին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին» թիվ 1136 որոշումը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի խախտմամբ կայացված լինելուն, ըստ որի՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները, վարչական մարմնի վերոգրյալ հիմնավորումների լույսի ներքո և ի հավելումն դրանց՝ փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը ապահովելու, ինչպես նաև գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները բացահայտելու համար, վարույթի շրջանակներում ճարտարապետության և քաղաքաշինության բաժնից տեղեկացել է, որ վարչական վարույթի մասնակիցը Վանաձոր, Տիգրան Մեծի 36-1 հասցեում /կադաստրային ծածկագիր: 06-001-0435-0022, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 0707-2020-06-0026 վկայական/, 0,0037 հա մակերեսով հողամասում, հասարակական նշանակության շինության ընդլայնումը և շինարարական աշխատանքները կատարել է առանց շինարարության թույլտվության, որով խախտվել են ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 15-ի թիվ 596-Ն որոշման 6-րդ գլխի պահանջները, որով էլ այդ աշխատանքները դիտարկվում են որպես ինքնակամ: Վարչական վարույթի մասնակիցը վարչական վարույթի լսումների ընթացքում չի ներկայացրել իրավախախտման փաստը բացառող որևէ հիմք, որպիսի պայմաններում վարչական մարմինը չունի որևէ ապացույց այդ աշխատանքները որպես ինքնակամ չդիտարկելու համար:

Այսպիսով՝ վարչական մարմինը, հիմք ընդունելով վերոգրյալը, ձեռնարկել է բոլոր անհրաժեշտ քայլերը փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը ապահովելու, ինչպես նաև գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները բացահայտելու համար, իսկ վարչական վարույթի մասնակիցը վարչական վարույթի լսումների ընթացքում չի ներկայացրել բողոքում բարձրացված ապացույցները:

Ինչ վերաբերում է այն պնդմանը, թե վարչական մարմինը որևէ միջոց չի ձեռնարկել պարզելու համար կառույցն իրականացնելու ժամանակահատվածը, էական է այս դեպքում, ոչ թե կառույցն իրականացնելու ժամանակահատվածը, այլ իրավախախտման կատարման և այն կատարող վարչական վարույթի մասնակցին վարչական պատասխանատվության ենթարկելու ժամանակահատվածը, որը համապատասխանում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 277-րդ հոդվածի 1-ին մասին, այն է՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննվում են վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը և մյուս նյութերը գործի քննության համար լիազորված մարմնի (պաշտոնատար անձի) կողմից ստանալու օրվանից սկսած երկու ամսվա ընթացքում:

3. Վարչական վարույթի մասնակցի կողմից ներկայացված այն դիտարկումը, թե 10 հունիսի 2026 թվականին Վանաձոր համայնքի ղեկավարի կողմից ընդունված «Գևորգ Հրաչիկի Հակոբյանին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին» թիվ 1136 որոշումը կայացվել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին մասի խախտմամբ, այն է՝ վարչական տույժը կարող է նշանակվել իրավախախտումը կատարվելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում, բացառությամբ սույն հոդվածով նախատեսված դեպքերի, իսկ շարունակվող և տևող իրավախախտման դեպքում՝ այն բացահայտվելու օրվանից երկու ամսվա ընթացքում, բացառությամբ սույն հոդվածով նախատեսված դեպքերի, և հավելել է, որ կառույցը կառուցվել է Գևորգ Հակոբյանին վարչական պատասխանատվության ենթարկելուց ավելի քան 20 տարի առաջ սխալ է, քանի որ, կառուցի կառուցման և իրավախախտման փաստով համապատասխան ընդլայնման և շինարարական աշխատանքների կատարման փաստերը տարբեր են և այստեղ խոսքը վերաբերում է հենց իրավախախտման կատարման ժամանակահատվածին, ոչ թե օրինական կառույցի կառուցման ժամանակահատվածին: Հետևաբար վարչական իրավախախտման կատարման վերաբերյալ կազմված արձանագրությունը և զեկուցագիրը և դրան հաջորդող գործողությունների արդյունքում կայացված եզրափակիչ վարչական ակտը չեն խախտել սույն հոդվածով սահմանված ժամկետները:

Հետևաբար վարչական մարմնի կողմից կայացված եզրափակիչ վարչական ակտը ենթակա չէ անվավեր ճանաչման, քանի որ, համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետի՝ անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է՝ օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով, և քանի որ առկա է իրավախախտում, որը հերքող որևէ ապացույց ներկայացված և (կամ) հայտնաբերված չէ, բողոքարկվող վարչական ակտը լրիվ իրավաչափ է և այն ընդունելու համար կիրառված օրենքը ճիշտ է:

Ելնելով վերոգրյալից՝ 10 հունիսի 2026 թվականին Վանաձոր համայնքի ղեկավարի կողմից ընդունված «Գևորգ Հրաչիկի Հակոբյանին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին» թիվ 1136 որոշումը լրիվ իրավաչափ է, իսկ վարչական բողոքը ենթակա է մերժման՝ իրավախախտման փաստը բացառող ապացույցի բացակայության պատճառով:

**3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.**

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 76-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի համաձայն՝ քննարկելով վարչական ակտի վերաբերյալ բերված վարչական բողոքը՝ վարչական մարմինը, որն ընդունել է բողոքարկվող վարչական ակտը, իրավասու է մերժելու բողոքը՝ վարչական ակտը թողնելով անփոփոխ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 76-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով, և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 15-ի թիվ 596-Ն որոշման 6-րդ գլխի պահանջներով՝

**ՈՐՈՇԵՑԻ**

1. Գևորգ Հրաչիկի Հակոբյանի լիազորված անձ՝ Արթուր Սուքիասյանի վարչական բողոքը մերժել՝ վարչական ակտը թողնելով անփոփոխ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարչական ակտի հասցեատիրոջն իրազեկելուն հաջորդող օրվանից:

3.Սույն որոշումը համարվում է վարչական ակտի հասցեատիրոջը հանձնված (պատշաճ ծանուցված) նաև որոշման մասին ծանուցումը Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում (azdarar.am) տեղադրելու օրվան հաջորդող հինգերորդ օրը:

4. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Վանաձոր համայնքի ղեկավարին դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

5.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Վանաձոր համայնքի ղեկավարը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. սեպտեմբերի 03
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, (060) 650162, (060) 650040 vanadzor.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 սեպտեմբերի 2026 թվականի N 1616

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԱՂԱՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 83 (ՊԱՅՄԱՆԱԿԱՆ) ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՈՒ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՄԱՐՈ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ԾԱՏՈՒՐՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Մարո Հարությունի Ծատուրյանի (ծնված՝ 01.05.1962թ.) 11.06.2026թ. դիմումը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, 26.08.2026թ. «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ1-219/26 Ի եզրակացությունը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, «ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ» ԱՁ-ի կողմից տրված տեղագրական հատակագիծը, 28.08.2026թ. թիվ 6087 հայտարարությունը (նոտարական ակտի կոդ: 763-20260827-66-10476415), 27.08.2026թ. թիվ 6079 հայտարարությունը (նոտարական ակտի կոդ: 763-20260827-66-10477195) և 27.08.2026թ. թիվ 6078 հայտարարությունը (նոտարական ակտի կոդ: 763-20260827-66-10477213) հայտարարությունը, Բաժանորդի էպիկրիզը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Աղայան փողոց թիվ 83 (պայմանական) հասցեում կառուցած բնակելի տունը և դրա զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ 363.3քմ մակերեսով հողամասը չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Բնակելի տունը կառուցվել է 1991թ.-ին և դրա կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ 363.3քմ մակերեսով հողամասը զբաղեցվել և շահագործվում է սկսած 1991թ.-ից:

Ղեկավարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի $14^3$-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով՝ որոշում եմ.

1. Ճանաչել Մարո Հարությունի Ծատուրյանի սեփականության իրավունքը մինչև 2001թ. մայիսի 15-ը Վանաձոր քաղաքի Աղայան փողոց թիվ 83(պայմանական) հասցեում կառուցված իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տան

կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 363.3քմ մակերեսով հողամասի ու դրա վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ ։

2. Փոխել Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Աղայան փողոց թիվ 83 (պայմանական) հասցեում գտնվող 363.3քմ մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը խառը կառուցապատման հողերից՝ բնակելի կառուցապատման հողերի: Հողամասի սահմանները որոշվում են՝ «ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ» ԱՁ-ի կողմից տրված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

3. Վանաձոր քաղաքի Աղայան փողոց թիվ 83 (պայմանական) հասցեում կառուցած բնակելի տանը տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Ղ. Աղայան փողոց թիվ 83/9 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. սեպտեմբերի 03
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, (060) 650162, (060) 650040 vanadzor.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

03 սեպտեմբերի 2026 թվականի N 1617

### ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՍԵՐԳԵՅ ՌՈՄԱՆՈՍԻ ՄԵԼԻՔՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՓՈՂՈՑ 12 ՇԵՆՔ, 29 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԽԱՆՈՒԹԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սերգեյ Ռոմանոսի Մելիքյանի 28.08.2026 թվականի թիվ 02/13397 դիմումը, Սերգեյ Ռոմանոսի Մելիքյանին սեփականության իրավունքով պատկանող Վանաձոր ք. Վարդանանց փողոց 12 շենք, 29 խանութ հասցեի անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 03082026-06-0040 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Սերգեյ Ռոմանոսի Մելիքյանին սեփականության իրավունքով պատկանող Վարդանանց փողոց 12 շենք, 29 հասցեում գտնվող խանութին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք. Ա. Մյասնիկյան փողոց, 12 շենք, 29 խանութ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ — Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. սեպտեմբերի 03
ք.Վանաձոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, (060) 650162, (060) 650040 vanadzor.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

03 սեպտեմբերի 2026 թվականի N 1618

### ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Վ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑ 4-17/27 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Էվելինա Գերասիմի Մարտիրոսյանի 27.08.2026 թվականի թիվ 02/13267 դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 19102018-06-0034 վկայականը, 09/07/2026 թվականի ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից տրված թիվ (ՍՏ-09072026-06-0744) տեղեկանքը, 05.03.2025 թվականի ավագանու ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի տարածական պլանավորման փաստաթղթերի նախագիծը հաստատելու մասին թիվ 7-Լ որոշումը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի $14^3$-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով՝ ***որոշում եմ.***

1. Փոխել Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Վ. Համբարձումյան փողոց 4-17/27 հասցեում գտնվող 0.0024հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման հողերից՝ բնակելի կառուցապատման հողերի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. սեպտեմբերի 03
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, (060) 650162, (060) 650040 vanadzor.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

07 սեպտեմբերի 2026 թվականի N 1619

## ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ 31 ՕԳՈՍՏՈՍԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1598 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վյաչեսլավ Մամաջանյանի (ծնված՝ 10.02.1977թ.), Աշոտ Ավետիքի Մամաջանյանի (ծնված՝ 16.09.1969թ.) և Ավետիք Արամի Մամաջանյանի (ծնված՝ 25.08.1944թ.) 22.07.2026 թվականի թիվ 02/11229 դիմումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 019208 վկայականը և Վանաձոր համայնքի ղեկավարի 31 օգոստոսի 2026 թվականի թիվ 1598 որոշումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածներով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնքի ղեկավարի 31 օգոստոսի 2026 թվականի «Համայնք Վանաձոր Վանաձոր քաղաքի Տավրոսի (նախկին Ժդանով) 20-րդ փողոց 24 հասցեում գտնվող, Աշոտ Ավետիքի Մամաջանյանի, Ավետիք Արամի Մամաջանյանի և Վյաչեսլավ Մամաջանյանի ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը ճանաչելու հողամասում ինքնակամ կառուցված բնակելի նշանակության շինությունները օրինականացնելու մասին» թիվ 1598 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Որոշման մեջ՝ 2-րդ և 3-րդ կետերում «սանհանգույցի» բառից հետո լրացնել «13.59քմ ընդհանուր արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 8.90քմ) անասնաշենքը» բառերով.

2. Որոշման մեջ՝ 3-րդ կետում «9100 (ինը հազար հարյուր)» բառերը փոխել 35860 (երեսունհինգ հազար ութ հարյուր վաթսուն) բառերով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ — Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. սեպտեմբերի 07
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, (060) 650162, (060) 650040 vanadzor.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 սեպտեմբերի 2026 թվականի N 1620

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂ ԳՈՒԳԱՐՔՈՒՄ (ԾԱԾԿԱԳԻՐ: 06-031-0009-0019) ԳՏՆՎՈՂ ՋՈՒԲԵԻԴԱ ՇԱՀԱԶԻԶԻ ԿԱՍԵՄՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ջուբեիդա Շահազիզի Կասեմյանի 21.08.2026 թվականի թիվ 02/12862 դիմումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1870431 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, 21.08.2026թ. տրված թիվ 5036 (նոտարական ակտի կոդ՝ 843-20260819-105-10443425) սեփականության իրավունքի վկայագիրը, 21.08.2026թ. տրված թիվ 5040 (նոտարական ակտի կոդ՝ 843-20260819-84-10443307) ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնքի գյուղ Գուգարքում (ծածկագիր: 06-031-0009-0019) գտնվող, Ջուբեիդա Շահազիզի Կասեմյանին պատկանող հողամասին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, գյուղ Գուգարք, Էներգետիկների 5-րդ փողոց, 14 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ — Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. սեպտեմբերի 07
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, (060) 650162, (060) 650040 vanadzor.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 սեպտեմբերի 2026 թվականի N 1621

## ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂ ՇԱՀՈՒՄՅԱՆՈՒՄ (ՀՈՂԱՄԱՍԻ ԾԱԾԿԱԳԻՐ: 06-084-0731-0002) ԳՏՆՎՈՂ ԱՐԵՎԼՈՒՅՍ ԵՊՈՆԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ԵՎ ԱՐՏԱԿ ՌԱԴԻԿԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՒՂՂԵԼՈՒ ԵՎ ԼՈՌԻ-1 ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԱԼ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արևլույս եպոնի Մարտիրոսյանի (ծնված՝ 16.09.1941թ.) և Արտակ Ռադիկի Մարտիրոսյանի (ծնված՝ 01.01.1974թ.) 28.08.2026թ. թիվ 02/13284 դիմումը, անշարժ գույքի նկատմամբ սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1179027 վկայականը, 20.06.2019թ. տրված գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին թիվ Կ-17/06/2019-34-0066 որոշումը, ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 14.05.2024թ. տրված գույքի առանձին որակական քանակական բնութագրերի և դրա նկատմամբ առանձին իրավունքների (սահմանափակումների) վերաբերյալ թիվ ԱՏ-14052024-06-0740 տեղեկանքով տրամադրած 13.08.2004թ. վարձակալության պայմանագիրը, 05.04.2013թ. տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 1229 և սեփականության իրավունքի թիվ 1228 վկայագրերը, «ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ» ԱՁ-ի կողմից տրված հողամասի հատակագիծը, Լոռի-1 միկրոռեգիոնալ տարածական պլանավորման փաստաթուղթը, Վանաձոր համայնքի ավագանու 05.03.2025 թվականի թիվ 7-Լ որոշումը, ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 12.08.2024 թվականին տրված թիվ 2-14 դրական եզրակացությունը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի $14^3$-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2011թ. 1920-Ն որոշման N1 հավելվածի 24-րդ կետի 3-րդ մասով, ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29.04.2021թ. թիվ 698-Ն որոշումով, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածով՝ որոշում եմ.

1. Ուղղել ու համապատասխանեցնել Վանաձոր համայնքի գյուղ Շահումյանում (ծածկագիր: 06-084-0731-0002) գտնվող, Արևլույս եպոնի Մարտիրոսյանին (ծնված՝ 16.09.1941թ.) 3/4 և Արտակ Ռադիկի Մարտիրոսյանին (ծնված՝ 01.01.1974թ.) 1/4 վարձակալության իրավունքով պատկանող 0.003150հա մակերեսով հողամասի ծածկագիրը, նպատակային և գործառնական նշանակությունը Լոռի-1 միկրոռեգիոնալ տարածական պլանավորման փաստաթղթին, Վանաձոր համայնքի ավագանու 05.03.2025 թվականի թիվ 7-Լ որոշմանը, ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ

1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 12.08.2024 թվականին տրված թիվ 2-14 դրական եզրակացությանը, 20.06.2019թ. տրված գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին թիվ Կ-17/06/2019-34-0066 որոշմանը և հաստատել որպես բնակավայրերի նպատակային նշանակության՝ գործառնական նշանակությունը՝ ընդհանուր օգտագործման հողեր:

2. Հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը համապատասխանում է Լոռի-1 միկրոռեգիոնալ տարածական պլանավորման փաստաթղթին, Վանաձոր համայնքի ավագանու 05.03.2025 թվականի թիվ 7-Լ որոշմանը, ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 12.08.2024 թվականին տրված թիվ 2-14 դրական եզրակացությանը, 20.06.2019թ. տրված գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին թիվ Կ-17/06/2019-34-0066 որոշմանը և ենթակա է գրանցման որպես բնակավայրերի նպատակային նշանակության՝ գործառնական նշանակությունը՝ ընդհանուր օգտագործման հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ — Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. սեպտեմբերի 07
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, (060) 650162, (060) 650040 vanadzor.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

07 սեպտեմբերի 2026 թվականի N 1622

## ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 30-Ի «ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 186 ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով գնումների պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված գնման առարկաների բնութագրերի նախագիծը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Գնումների մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2017թ. ապրիլի 13-ի «Գնումների պլանի ձևը, դրա լրացման, հաստատման և հրապարակման կարգը հաստատելու մասին» թիվ 390-Ն որոշմամբ հաստատված թիվ 3 հավելվածով՝ որոշում եմ.

1.Վանաձոր համայնքի ղեկավարի 2026 թվականի հունվարի 30-ի «Վանաձոր համայնքի ղեկավարի 2026 թվականի գնումների պլանը հաստատելու մասին» թիվ 186 որոշման հավելվածում կատարել լրացում՝ համաձայն հավելվածի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ — Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2026թ. սեպտեմբերի 07
ք.Վանաձոր

Հավելված

Հաստատում եմ՝

Վանաձոր համայնքի ղեկավարի պաշտոնակատար՝

_____________ Ա. Փելեշյան

Թիվ 1622 որոշում

« 07 » սեպտեմբերի 2026թ.

Պատվիրատու Վանաձոր համայնք

ՅԱնվանումը 2026թ. Գնումների պլանի լրացում 46

Ֆինանսավորման աղբյուրը Վանաձոր համայնքի 2026թ. բյուջե

| Միջանցիկ կոդը՝ ըստ ԳՄԱ դասակարգման | Ապրանքների, ծառայությունների և աշխատանքների անվանումը | Գնման ձևը (ընթացակարգը) | Չափման միավորը | Միավորի գինը | Քանակը | Գումարը (հազար) դրամ |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| | **Բաժին-01 խումբ-1 դաս-1 Աշխատակազմի պահպանման ծախսեր** | | | | | |
| | **Էներգետիկ ծառայություններ /Հոդված-4212/** | | | | | |
| 65311100 | Էներգետիկ ծառայություններ/էլ. էներգիա/ | ՄԱ | կվտ/ժամ | 49,8 | 508613,797 | 25328,967 |
| 65211100 | Գազի մատակարարման ծառայություններ | ՄԱ | խմ | 144 | 78001,057 | 11232,152 |
| | **Կոմունալ ծառայություններ/Հոդված-4213/** | | | | | |
| 65111100 | Ջրամատակարարման և ջրահեռացման ծառայություններ | ՄԱ | խմ | 200 | 95913,185 | 19182,637 |
| 50321700 | Վանաձոր համայնքում դեռատիզացիոն և դեզինֆեկցիոն ծառայություններ | ՄԱ | դրամ | 600000 | 1 | 600,00 |
| | **Կապի ծառայություններ/հոդված 4214/** | | | | | |
| 72411100 | Վանաձոր համայնքի 2026թ. կարիքների համար ինտերնետ կապի ծառայությունների ձեռքբերում | ՄԱ | դրամ | * | 1 | * |
| 72411100 | Վանաձոր համայնքի 2026թ. կարիքների համար ինտերնետ կապի ծառայությունների ձեռքբերում | ՄԱ | դրամ | 902000 | 1 | 902.00 |
| | **Վարչական ծառայություններ/հոդված 4231/** | | | | | |
| 79531100 | Գրավոր թարգմանության ծառայություններ | ՄԱ | դրամ | 950000 | 1 | 950,00 |
| | **Ծառայություններ /հոդված 4231/** | | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 79821170 | Վանաձորի համայնքապետարանի կարիքների համար այլ տպագրական ծառայություններ | ՄԱ | դրամ | 957474 | 1 | 957,47 |
| 98391200 | Վանաձորի համայնքապետարանի կարիքների համար ընդհանուր բնույթի այլ վարչական ծառայություններ | ՄԱ | դրամ | 905510 | 1 | 905,51 |
| | Համակարգչային ծառայություններ/հոդված 4232/ | | | | | |
| 72261180 | Վանաձորի համայնքապետարանի 2026թ. կարիքների համար համակարգչային ծրագրային սպասարկման ծառայություններ | ՄԱ | դրամ | 480000 | 1 | 480.00 |
| 72261180 | Վանաձորի համայնքապետարանի կարիքների համար համակարգչային ծրագրային սպասարկման ծառայություններ | ՄԱ | դրամ | 480000 | 1 | 480.00 |
| | Կառավարչական ծառայություններ /հոդված 4235/ | | | | | |
| 79211150 | Վանաձոր համայնքի 2025 թվականի բյուջեի տարեկան հաշվետվության վերաբերյալ անկախ աուդիտ անցկացնելու նպատակով աուդիտորական ծառայություններ | ԳՀ | դրամ | 1788000 | 1 | 1788.0 |
| | ընդհանուր բնույթի այլ ծառայություններ /հոդված 4239/ | | | | | |
| 72611100 | Վանաձորի համայնքապետարանի 2026թ. կարիքների համար համակարգչային տեխնիկական օժանդակման ծառայություններ | ՄԱ | դրամ | 984930 | 1 | 984.93 |
| 92511110 | Վանաձորի համայնաքապետարանի կարիքների համար փաստաթղթերի արխիվացման ծառայություններ | ՄԱ | դրամ | 990900 | 1 | 990,90 |
| | Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում /հոդված 4252/ | | | | | |
| 50311120 | Վանաձորի համայնքապետարանի 2026 թվականի կարիքների համար համակարգչային տեխնիկայի վերանորոգման և պահպանման ծառայություններ | ՄԱ | դրամ | 994000 | 1 | 994,00 |
| | Ապրանքներ / հոդված 4252/ | | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 34921190 | Անցակետերին հսկողության սարք | ՄԱ | հատ | 980000 | 1 | 980,00 |
| Գրասենյակային ապրանքներ և նյութեր/հոդված 4261/ | | | | | | |
| 30234640 | Հիշողության կրիչ 1 | ԷԱՃ | հատ | 3500 | 10 | 35000 |
| 30192133 | Սրիչ | ԷԱՃ | հատ | 250 | 80 | 20000 |
| 30197220 | Ամրակ 1 | ԷԱՃ | հատ | 2,5 | 5600 | 14000 |
| 30192121 | Գրիչ 1 | ԷԱՃ | հատ | 600 | 120 | 72000 |
| 30192121 | Գրիչ 2 | ԷԱՃ | հատ | 90 | 1600 | 144000 |
| 30192700 | Գրառումների գիրք | ԷԱՃ | հատ | 2500 | 30 | 75000 |
| 30197230 | Թղթապանակ 7 | ԷԱՃ | հատ | 1000 | 100 | 100000 |
| 30197622 | Թուղթ | ԷԱՃ | կգ | 800 | 6800 | 5440000 |
| 35821400 | ՀՀ ազգային դրոշ | ԷԱՃ | հատ | 9000 | 40 | 360000 |
| 30192780 | Էջանիշ | ԷԱՃ | հատ | 200 | 200 | 40000 |
| 30197322 | Կարիչ 1 | ԷԱՃ | հատ | 1500 | 20 | 30000 |
| 30197322 | Կարիչ 2 | ԷԱՃ | հատ | 1500 | 20 | 30000 |
| 30197112 | Կարիչի ասեղ 1 | ԷԱՃ | տուփ | 130 | 120 | 15600 |
| 30197100 | Կարիչի ասեղ 2 | ԷԱՃ | տուփ | 150 | 120 | 18000 |
| 30192130 | Մատիտ | ԷԱՃ | հատ | 120 | 100 | 12000 |
| 22811150 | Նոթատետր 2 | ԷԱՃ | հատ | 2500 | 30 | 75000 |
| 30199420 | Նշումների թուղթ կպչուն 1 | ԷԱՃ | հատ | 200 | 400 | 80000 |
| 30199430 | Նշումների թուղթ 2 | ԷԱՃ | հատ | 1200 | 100 | 120000 |
| 30192114 | Շտամպի բարձիկի թանաք | ԷԱՃ | հատ | 400 | 10 | 4000 |
| 30192160 | Ջնջիչ | ԷԱՃ | հատ | 190 | 60 | 11400 |
| 30192700 | Սոսինձ չոր | ԷԱՃ | հատ | 350 | 50 | 17500 |
| 39263510 | Սեղմակ 1 | ԷԱՃ | հատ | 10 | 960 | 9600 |
| 39263520 | Սեղմակ 2 | ԷԱՃ | հատ | 11,7 | 1800 | 21060 |
| 39263520 | Սեղմակ 3 | ԷԱՃ | հատ | 14,2 | 3600 | 51120 |
| 39263520 | Սեղմակ 5 | ԷԱՃ | հատ | 29,2 | 1800 | 52560 |
| 39263520 | Սեղմակ 6 | ԷԱՃ | հատ | 47,5 | 1200 | 57000 |
| 30192100 | Ռետին | ԷԱՃ | հատ | 100 | 100 | 10000 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 39292530 | Քանոն 1 | ԷԱՃ | հատ | 290 | 80 | 23200 |
| 30197231 | Ֆայլ | ԷԱՃ | հատ | 2000 | 70 | 140000 |
| 30197233 | Թղթապանակ 1 | ԷԱՃ | հատ | 40 | 100 | 4000 |
| | | | | | | 7082040 |
| | *Այլ նպատակային նյութեր, այդ թվում՝ /հոդված 4269/* | | | | | ***988,80*** |
| 42131490 | Սիֆոն | ՄԱ | հատ | 1200 | 12 | 14,40 |
| 44221141 | Բռնակ/եվրո դռան/ | ՄԱ | հատ | 2500 | 25 | 62,50 |
| 44511390 | Բռնակ/եվրո պատուհանի/ | ՄԱ | հատ | 1000 | 25 | 25,00 |
| 44221141 | Բռնակ/փայտի դռան/ | ՄԱ | հատ | 5000 | 6 | 30,00 |
| 33141120 | Սիլիկոնի սեղմիչ | ՄԱ | հատ | 2000 | 2 | 4,00 |
| 44551100 | Զսպանակ դռան | ՄԱ | հատ | 14000 | 3 | 42,00 |
| 44521100 | Փական մեծ | ՄԱ | հատ | 3500 | 30 | 105,00 |
| 44521100 | Փական | ՄԱ | հատ | 1400 | 25 | 35,00 |
| 42131410 | Միջուկ փականի | ՄԱ | հատ | 2200 | 45 | 99,00 |
| 42131100 | Ջրի փական | ՄԱ | հատ | 2500 | 12 | 30,00 |
| 44411100 | Ծորակ 1 տեղանոց | ՄԱ | հատ | 6000 | 8 | 48,00 |
| 44411751 | Զուգարանակոնքի ջրի բաքի միջուկ | ՄԱ | հատ | 2000 | 10 | 20,00 |
| 31684400 | Էլ. վարդակ | ՄԱ | հատ | 650 | 46 | 29,90 |
| 31211221 | Էլ. անջատիչ | ՄԱ | հատ | 750 | 46 | 34,50 |
| 31685000 | Երկարացման լար 5մ 3 հատանոց | ՄԱ | հատ | 2000 | 10 | 20,00 |
| 31685000 | Երկարացման լար 3մ 3 հատանոց | ՄԱ | հատ | 1500 | 8 | 12,00 |
| 31531300 | Լամպ LED մեծ | ՄԱ | հատ | 1000 | 150 | 150,00 |
| 31531300 | Լամպ LED փոքր | ՄԱ | հատ | 800 | 60 | 48,00 |
| 31531210 | Լամպ 100Վ | ՄԱ | հատ | 100 | 400 | 40,00 |
| 31531600 | Լամպ ցերեկային 120սմ | ՄԱ | հատ | 350 | 70 | 24,50 |
| 31531600 | Լամպ կարճ 120սմ | ՄԱ | հատ | 300 | 50 | 15,00 |
| 31681100 | Պլատա երկար | ՄԱ | հատ | 400 | 20 | 8,00 |
| 31681100 | Պլատա կարճ | ՄԱ | հատ | 300 | 20 | 6,00 |
| 31531710 | Դրոսել | ՄԱ | հատ | 300 | 20 | 6,00 |
| 31651400 | Մեկուսիչ ժապավեն | ՄԱ | հատ | 200 | 50 | 10,00 |
| 18141100 | Բանվորական ձեռնոց | ՄԱ | զույգ | 200 | 350 | 70,00 |
| | **Տրանսպորտային նյութեր, այդ թվում՝** | | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | *Վառելիք/հոդված-4264/* | | | | | |
| 9132200 | *բենզին ռեգուլյար* | *ԷԱՃ* | լիտր | 430 | 10317 | 4436,31 |
| 9411710 | *սեղմված բնական գազ* | *ԷԱՃ* | կգ | 273,9998 | 5216 | 1429.183 |
| | ***ապրանքներ/հոդված-4267/*** | | | | | 752.72 |
| 41111100 | խմելու ջուր/19 լ տարայով/ | ՄԱ | լիտր | 100 | 2280 | 228.0 |
| 39221350 | միանգամյա օգտագործման բաժակ | ՄԱ | հատ | 15 | 10000 | 150.0 |
| 39221350 | միանգամյա օգտագործման բաժակ/թղթյա/ | ՄԱ | հատ | 20 | 4000 | 80.0 |
| 41111100 | խմելու ջուր/պլաստիկ 22ով/ | ՄԱ | լիտր | 250 | 180 | 45.0 |
| 15981200 | հանքային ջուր/պլաստիկ 22ով/ | ՄԱ | լիտր | 330 | 204 | 67.32 |
| 41111100 | խմելու ջուր/ապակե տարայով/ | ՄԱ | լիտր | 340 | 160 | 54.4 |
| 15981200 | հանքային ջուր/ապակե տարայով/ | ՄԱ | լիտր | 400 | 320 | 128.0 |
| | ***Վանաձորի համայնքապետարանի կարիքների համար ավտոպահեստամասերի ձեռքբերում և փոխարինում*** | | | | | 5029.25 |
| 50111130 | Տոյոտա Քամրի ավտոմեքենայի ավտոպահեստամասերի ձեռքբերում և փոխարինում | ԳՀ | դրամ | 1000000 | 1 | 1000,00 |
| 50111130 | Մերսեդես Բենց E 200 ավտոմեքենայի ավտոպահեստամասերի ձեռքբերում և փոխարինում | ԳՀ | դրամ | 700000 | 1 | 700,00 |
| 50111130 | ՎԱԶ 21214 ավտոմեքենայի ավտոպահեստամասերի ձեռքբերում և փոխարինում | ԳՀ | դրամ | 829250 | 1 | 829,25 |
| 50111130 | ԶԻԼ-130 ավտոմեքենայի ավտոպահեստամասերի ձեռքբերում և փոխարինում | ԳՀ | դրամ | 1250000 | 1 | 1250,00 |
| 50111130 | ԿԱՎԶ մակնիշի ավտոմեքենայի ավտոպահեստամասերի ձեռքբերում և փոխարինում | ԳՀ | դրամ | 1250000 | 1 | 1250,00 |
| | ***Ծառայություններ/հոդված-4264/*** | | | | | |
| ***Աշխատանքներ/ հոդված - 5122/*** | | | | | | |
| 45311126 | Վանաձորի համայնքապետարանի համակարգչային ներքին ցանցի արդիականացում | ԳՀ | դրամ | 8769372 | 1 | 8769,372 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 45311126 | Վանաձորի համայնքապետարանի համակարգչային ներքին ցանցի արդիականացում(լրացուցիչ աշխատանքներ) | ՄԱ | դրամ | 783210 | 1 | 783,21 |
| | ***Համակարգչային տեխնիկայի ձեռքբերում /հոդված-5122/*** | | | | | |
| 30211220 | Համակարգիչ /աշխատանքային/ | ԷԱՃ | հատ | 510000 | 23 | 11730,00 |
| 30237490 | Մոնիտոր | ԷԱՃ | հատ | 78000 | 23 | 1794,00 |
| 30232110 | Բազմաֆունկցիոնալ տպիչ | ԷԱՃ | հատ | 160000 | 9 | 1440,00 |
| | ***Ապրանքներ /հոդված-5122/*** | | | | | |
| 39111190 | Մետաղական ֆրեյմով սպասարկման/կոնֆերանս աթոռ | ***ՄԱ*** | ***հատ*** | ***90000*** | ***2*** | 180,00 |
| 39111220 | Ղեկավարի գրասենյակային աթոռ | ***ՄԱ*** | ***հատ*** | ***180000*** | ***3*** | 540,00 |
| | | | | | | **720,00** |
| | ***Բաժին-04 խումբ-2 դաս-1 Գյուղատնտեսություն*** | | | | | |
| **Ծառայություններ/հոդված 4241/** | | | | | | |
| 85221000 | Վանաձոր համայնքի կարիքների համար անասնաբուժական ծառայությունների ձեռքբերում | ԷԱՃ | դրամ | 882000 | 1 | 882,00 |
| 85221000 | Վանաձոր համայնքի Գուգարք բնակավայրի կարիքների համար անասնաբուժական ծառայությունների ձեռքբերում | ԷԱՃ | դրամ | 986000 | 1 | 986,00 |
| 85221000 | Վանաձոր համայնքի Շահումյան բնակավայրի կարիքների համար անասնաբուժական ծառայությունների ձեռքբերում | ԷԱՃ | դրամ | 710000 | 1 | 710,00 |
| 85221000 | Վանաձոր համայնքի Դարպաս բնակավայրի կարիքների համար անասնաբուժական ծառայությունների ձեռքբերում | ԷԱՃ | դրամ | 422000 | 1 | 422,00 |
| | | | | | | 3000,00 |
| | ***Բաժին-06 խումբ-5 դաս-1 Գյուղատնտեսություն*** | | | | | |
| **Ծառայություններ/հոդված 4241/** | | | | | | |
| 71251100 | Վանաձոր համայնքի հողամասերի և շինությունների չափագրության ծառայությունների ձեռքբերում | ԳՀ | դրամ | 2000000 | 1 | 2000,0 |
| | ***Բաժին-04 խումբ-5 դաս-1 Ճանապարհային տրանսպորտ*** | | | | | |
| | ***Ծառայություններ /հոդված-4239/*** | | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 50231300 | Վանաձոր համայնքի ճանապարհային նշանների և լուսաֆորային օբյեկտների սպասարկում | ԳՀ | դրամ | 4896700 | 1 | 4896.7 |
| 45231213 | Վանաձոր համայնքի ճանապարհային նշանների սպասարկման ծառայություններ | ԳՀ | դրամ | 9999707 | 1 | 9999,707 |
| | *Աշխատանքներ /հոդված-4251/* | | | | | |
| 45231177 | Վանաձոր համայնքի փողոցների փոսային ընթացիկ նորոգման աշխատանքներ | ԲՄ | դրամ | 88724570 | 1 | 88724,57 |
| 45231177 | Վանաձոր համայնքի փողոցների փոսային ընթացիկ նորոգման լրացուցիչ աշխատանքներ | ՄԱ | դրամ | 1342296 | 1 | 1342,296 |
| 45231175 | Վանաձոր համայնքի փողոցների երթևեկելի մասի նշագծման աշխատանքներ | ԳՀ | դրամ | 69998989 | 1 | 69998,989 |
| 45111300 | Արջուտի աղբաթափման վայր տանող ճանապարհի վերանորոգման/հարեցման/ աշխատանքներ | ԳՀ | դրամ | 2500550 | 1 | 2500.55 |
| 45111300 | Վանաձոր համայնքի Գուգարք բնակավայրի հանդամիջյան ճանապարհների բարեկարգման աշխատանքներ | ԳՀ | դրամ | 2797970 | 1 | 2797.97 |
| | *Աշխատանքներ /հոդված-5113/* | | | | | |
| 45231220 | Վանաձոր համայնքի Հրաչյա Ներսիսյան փողոցի 1-ին նրբանցքի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերում /համայնքի մասնաբաժին/ | ԲՄ | դրամ | 146 249 415 | 1 | 146249.41 |
| 45231220 | Վանաձոր համայնքի Հրաչյա Ներսիսյան փողոցի 1-ին նրբանցքի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերում /պետության մասնաբաժին/ | ԲՄ | դրամ | * | 1 | * |
| 45221142 | Վանաձոր համայնքի Սայաթ-Նովա փողոց թիվ 18 հողամաս հասցեում գտնվող թիվ 4 մանկապարտեզին կից հողամասերի հենապատերի վերանորոգման աշխատանքների ձեռքբերում | ԳՀ | դրամ | 11 999 910 | 1 | 11999,91 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 45231220 | ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի Տիգրանյան փողոցի հիմնանորոգման աշխատանքներ | ԳՀ | դրամ | 35 108 180 | 1 | 35108,18 |
| 45231220 | ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի Տիգրանյան փողոցի հիմնանորոգման լրացուցիչ աշխատանքներ | ՄԱ | դրամ | 1 875 871 | 1 | 1875,87 |
| 45231220 | ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի Սունդուկյան փողոցի հիմնանորոգման աշխատանքներ | ԲՄ | դրամ | 308 309 210 | 1 | 308309.21 |
| 45231220 | Լոռու մարզի Վանաձոր համայնքի Սարի թաղ 1-ին փողոցի հիմնանորոգման աշխատանքներ | ԲՄ | դրամ | 217 333 000 | 1 | 217333,00 |
| 71351540 | Լոռու մարզի Վանաձոր համայնքի Սարի թաղ 1-ին փողոցի հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություններ | ԳՀ | դրամ | 3 420 000 | 1 | 3420,00 |
| 98111140 | Լոռու մարզի Վանաձոր համայնքի Սարի թաղ 1-ին փողոցի հիմնանորոգման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություններ | ՄԱ | դրամ | 912 000 | 1 | 912,00 |
| | **ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի Բանակի փողոցի հիմնանորոգման աշխատանքներ (սուբվենցիոն ծրագիր)** | | | | | |
| 45231220 | ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի Բանակի փողոցի հիմնանորագման աշխատանքներ | ԲՄ | դրամ | * | 1 | * |
| | **Ծառայություններ /5113/** | | | | | |
| 71351540 | Վանաձոր համայնքի Բանակի փողոցի հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություն | ԳՀ | դրամ | * | 1 | * |
| 98111140 | Վանաձոր համայնքի Բանակի փողոցի հիմնանորոգման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություն | ՄԱ | դրամ | * | 1 | * |
| | **ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի Դարպաս բնակավայրի գլխավոր փողոց՝ Կ. Դեմիրճյան փողոցից մինչև 1-ին փողոցի հիմնանորոգման աշխատանքներ (սուբվենցիոն ծրագիր)** | | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 45231220 | Վանաձոր համայնքի Դարպաս բնակավայրի գլխավոր փողոց՝ Կ. Դեմիրճյան փողոցից մինչև 1-ին փողոցի հիմնանորոգման աշխատանքներ | ԲՄ | դրամ | * | 1 | * |
| 71351540 | Վանաձոր համայնքի Դարպաս բնակավայրի գլխավոր փողոց՝ Կ. Դեմիրճյան փողոցից մինչև 1-ին փողոցի հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություն | ԳՀ | դրամ | * | 1 | * |
| 98111140 | Վանաձոր համայնքի Դարպաս բնակավայրի գլխավոր փողոց՝ Կ. Դեմիրճյան փողոցից մինչև 1-ին փողոցի հիմնանորոգման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություն | ՄԱ | դրամ | * | 1 | * |
| | **ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի Տարոն-4 թաղամասի գլխավոր փողոցից մինչև Բելառուսական թաղամասի հիմնանորոգման աշխատանքներ (սուբվենցիոն ծրագիր)** | | | | | |
| 45231220 | Վանաձոր համայնքի Տարոն-4 թաղամասի գլխավոր փողոցից մինչև Բելառուսական թաղամասի հիմնանորոգման աշխատանքներ | ԲՄ | դրամ | * | 1 | * |
| | ***Ծառայություններ /հոդված-5113/*** | | | | | |
| 71351540 | Վանաձոր համայնքի Տարոն-4 թաղամասի գլխավոր փողոցից մինչև Բելառուսական թաղամասի հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություն | ԳՀ | դրամ | * | 1 | * |
| 98111140 | Վանաձոր համայնքի Տարոն-4 թաղամասի գլխավոր փողոցից մինչև Բելառուսական թաղամասի հիմնանորոգման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություն | ՄԱ | դրամ | * | 1 | * |
| | **ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի Շիրակացի փողոցի հիմնանորոգման աշխատանքներ (սուբվենցիոն ծրագիր)** | | | | | |
| 45231220 | ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի Շիրակացի փողոցի հիմնանորոգման աշխատանքներ | ԲՄ | դրամ | * | 1 | * |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 71351540 | ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի Շիրակացի փողոցի հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություններ | ԳՀ | դրամ | * | 1 | * |
| 98111140 | ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի Շիրակացի փողոցի հիմնանորոգման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություններ | ՄԱ | դրամ | * | 1 | * |
| | **ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի Բաթումի փողոցի հիմնանորոգման աշխատանքներ (սուբվենցիոն ծրագիր)** | | | | | |
| 45231220 | ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի Բաթումի փողոցի հիմնանորոգման աշխատանքներ | ԲՄ | դրամ | * | 1 | * |
| **Ծառայություն/հոդված 5113/** | | | | | | |
| 71351540 | ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի Բաթումի փողոցի հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություններ | ԳՀ | դրամ | * | 1 | * |
| | **Ծառայություն/հոդված 5113/** | | | | | |
| 98111140 | ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի Բաթումի փողոցի հիմնանորոգման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություններ | ՄԱ | դրամ | * | 1 | * |
| | ***Ապրանքներ /հոդված-5121/*** | | | | | |
| 34121100 | Վանաձոր համայնքի կարիքների համար ավտոբուսների ձեռքբերում | ԷԱՃ | հատ | 38 000 000 | 45 | 1710000,00 |
| | Ծառայություններ /հոդված-5113/ | | | | | |
| 71351540 | Վանաձոր համայնքի Հրաչյա Ներսիսյան փողոցի 1-ին նրբանցքի հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայության ձեռքբերում /համայնքի մասնաբաժին/ | ԳՀ | դրամ | 845 000 | 1 | 845,00 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 71351540 | Վանաձոր համայնքի Հրաչյա Ներսիսյան փողոցի 1-ին նրբանցքի հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայության ձեռքբերում /պետության մասնաբաժին/ | ԳՀ | դրամ | * | 1 | * |
| 98111140 | Վանաձոր համայնքի Հրաչյա Ներսիսյան փողոցի 1-ին նրբանցքի հիմնանորոգման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայության ձեռքբերում /համայնքի մասնաբաժին/ | ՄԱ | դրամ | 928 870 | 1 | 928.87 |
| 98111140 | Վանաձոր համայնքի Հրաչյա Ներսիսյան փողոցի 1-ին նրբանցքի հիմնանորոգման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայության ձեռքբերում /պետության մասնաբաժին/ | ՄԱ | դրամ | * | 1 | * |
| 71351540 | Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի, Տիգրանյան փողոցի հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություն | ԳՀ | դրամ | 700000 | 1 | 700,00 |
| 71351540 | Վանաձոր համայնքի Իսահակյան փողոց 3-րդ նրբանցք տանող ճանապարհի հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություն | ԳՀ | դրամ | 1000000 | 1 | 1000.00 |
| 98111140 | Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Տիգրանյան փողոցի հիմնանորոգման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություն | ՄԱ | դրամ | 210649 | 1 | 210,65 |
| 98111140 | Վանաձոր համայնքի Իսահակյան փողոց 3-րդ նրբացք տանող ճանապարհի հիմնանորոգման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություն | ՄԱ | դրամ | 384000 | 1 | 384.0 |
| 45231220 | Վանաձոր համայնքի Թամանցիների փողոցի հիմնանորոգման աշխատանքներ | ԳՀ | դրամ | 38922120 | 1 | 38922,12 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 71351540 | Վանաձոր համայնքի Թամանցիների փողոցի հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություն | ԳՀ | դրամ | 780000 | 1 | 780,00 |
| 98111140 | Վանաձոր համայնքի Թամանցիների փողոցի հիմնանորոգման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություն | ՄԱ | դրամ | 252000 | 1 | 252,00 |
| | **Վանաձոր համայնքի Մյասնիկյան փողոցից մինչև Բուսաբանական փողոցի հիմնանորոգման աշխատանքներ (սուբվենցիոն ծրագիր)** | | | | | |
| 45231220 | Վանաձոր համայնքի Մյասնիկյան փողոցից մինչև Բուսաբանական փողոցի հիմնանորոգման աշխատանքներ | ԲՄ | դրամ | * | 1 | * |
| | ***Բաժին -05 խումբ -1 դաս-1 Աղբահանում*** | | | | | |
| | կոմունալ ծառայություններ /հոդված 4213/ | | | | | |
| 90611100 | 1-ին գոտու սանիտական մաքրման ծառայություն | ԳՀ | դրամ | 7977445 | 1 | 7977,445 |
| 90611100 | 2-րդ գոտու սանիտական մաքրման ծառայություն | ԳՀ | դրամ | 5892718 | 1 | 5892,718 |
| 90611100 | 3-րդ գոտու սանիտական մաքրման ծառայություն | ԳՀ | դրամ | 12383002 | 1 | 12383,002 |
| 90611100 | 4-րդ գոտու սանիտական մաքրման ծառայություն | ԳՀ | դրամ | 5408000 | 1 | 5408,00 |
| 90611100 | 5-րդ գոտու սանիտական մաքրման ծառայություն | ԳՀ | դրամ | 9038000 | 1 | 9038,00 |
| 90611100 | 6-րդ գոտու սանիտական մաքրման ծառայություն | ԳՀ | դրամ | 11610825 | 1 | 11610,825 |
| 90511100 | 2026թ. համար Վանաձոր համայնքի Դարպաս բնակավայրի կենցաղային աղբահանության ծառայություններ | ԳՀ | դրամ | 3000000 | 1 | 3000,00 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 90511100 | Վանաձոր համայնքում շաքաթօրյակների իրականացման ծառայությունների մատուցում | ԳՀ | դրամ | 2899000 | 1 | 2899.0 |
| 90611100 | 1-ին գոտու սանիտական մաքրման ծառայություն/200 օրվա համար/ | ԳՀ | դրամ | 4507100 | 1 | 4507,1 |
| 90611100 | 2-րդ գոտու սանիտական մաքրման ծառայություն/200 օրվա համար/ | ԳՀ | դրամ | 3329300 | 1 | 3329,3 |
| 90611100 | 6-րդ գոտու սանիտական մաքրման ծառայություն/200 օրվա համար/ | ԳՀ | դրամ | 6560000 | 1 | 6560,00 |
| | **Վանաձոր համայնքի խոշոր եզրաչափի աղբի տեղափոխման ծառայություն** | | | | | |
| 90511100 | Վանաձոր համայնքի 2026թ. կարիքների համար խոշոր եզրաչափի աղբի տեղափոխման ծառայություն | ԳՀ | դրամ | 14950000 | 1 | 14950.0 |
| | **/հոդված-4239/** | | | | | |
| 45231183 | Վանաձոր համայնքի Տարոն-4 թաղամասի աղբաթափման վայրի և հարակից տարածքի մաքրման և հարթեցման աշխատանքներ | ԳՀ | դրամ | 2500100 | 1 | 2500,1 |
| 90911200 | Վանաձոր համայնքում աղբարկղերի լվացման և ախտահանման ծառայություններ | ՄԱ | դրամ | 998250 | 1 | 998.25 |
| | **/հոդված-5129/** | | | | | |
| 39224341 | Վանաձոր համայնքի կարիքների համար աղբարկղերի ձեռքբերում | ԷԱՃ | հատ | 14985000 | 1 | 14985.0 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Բաժին-05 խումբ-2 դաս-1 կեղտաջրերի հեռացում /հոդված 4239/ | | | | | |
| 90441100 | Վանաձոր համայնքում կոյուղագծերի մաքրման և սպասարկման | ԳՀ | դրամ | 10000000 | 1 | 10000.0 |
| 45231148 | Վանաձոր համայնքի անձրևաջրատար ընդունիչ դիտահորերի սպասարկման աշխատանքներ | ԳՀ | դրամ | 10551300 | 1 | 10551,3 |
| | Ծառայություններ /հոդված-5112/ | | | | | |
| | նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայություններ | | | | | |
| 71241200 | Վանաձոր համայնքի մի շարք թաղամասերում կոյուղագծերի կառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազման ծառայություն | ԳՀ | դրամ | 2200000 | 1 | 2200,0 |
| | Բաժին-05 խումբ-3 դաս-1 Շրջակա միջավայրի աղտոտման դեմ պայքար | | | | | |
| | Աշխատանքներ /հոդված 4239/ | | | | | |
| 45241131 | Վանաձոր համայնքի գետերի հուների մաքրման աշխատանքներ | ԳՀ | դրամ | 2843380 | 1 | 2843.380 |
| | Բաժին-05 խումբ-4 դաս-1 կենսաբազմազանություն և բնության պաշտպանություն | | | | | |
| | Ծառայություններ /հոդված 4239/ | | | | | |
| 90721100 | Վանաձոր համայնքի տարածքում թափառող կենդանիների ստերիլիզացման, ամլացման ծառայություններ | ԳՀ | դրամ | 14994000 | 1 | 14994.0 |
| | Բաժին -06 խումբ -1 դաս-1 Բնակարանային շինարարություն | | | | | |
| | Ապրանք /Հոդված 5113/ | | | | | |
| 42414700 | վերելակների ձեռքբերում՝ տեղադրումով | ԲՄ | հատ | 10565760 | 50 | 528288,00 |
| | Ծառայություններ /հոդված-4239/ | | | | | |
| 98371120 | Վանաձոր համայնքի Շահումյան բնակավայրի գերեզմանատներ սպասարկման ծառայություններ | ՄԱ | դրամ | 990000 | 1 | 990,00 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Բաժին -06 խումբ -3 դաս-1 | | | | | | |
| Ծառայություններ /Հոդված 4239/ | | | | | | |
| 98111140 | Վանաձոր համայնքի Հայքի հրապարակի, Շառլ Ազնավուրի անվան զբոսայգու, Տարոն 4 թաղամասի Մարդու իրավունքների այգու և Սայաթ Նովայի անվան այգու շատրվանների և ջրավազանների սպասարկման և վերանորոգման ծառայություններ | ՄԱ | դրամ | 12287095 | 1 | 12287.095 |
| Բաժին -06 խումբ -4 դաս-1- Փողոցների լուսավորություն | | | | | | |
| Ծառայություններ /Հոդված 4239/ | | | | | | |
| 50231200 | Վանաձոր համայնքի փողոցային լուսավորության, շենքերի արտաքին լուսավորության սպասարկում և շահագործում | ԳՀ | դրամ | 19994950 | 1 | 19994,95 |
| Բաժին -06 խումբ -5 դաս-1 Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ | | | | | | |
| | Փորձաքննության ծառայություններ/հոդված-4235/ | | | | | |
| | նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայություններ | | | | | |
| 50531140 | Վանաձոր համայնքի Բանակի փողոցի հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայություն | ԳՀ | դրամ | 144000 | 1 | 144,00 |
| 50531140 | Վանաձոր համայնքի Ա. Մյասնիկյան փողոցի հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայություն | ԳՀ | դրամ | 180000 | 1 | 180,00 |
| 50531140 | Վանաձոր համայնքի Ա. Շիրակացու փողոցի հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայություն | ԳՀ | դրամ | 150000 | 1 | 150,00 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
